ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի նոյեմբերի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Անգլիկան Եկեղեցու պետ Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերիի և Անգլիայի Հայոց թեմի առաջնորդ Եղիշե արք. Կիպրիանի պաշտոնական իրավերներով, մեկնեց Անգլիա:

Այցելության ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդիպեց Անգլիայի Եղիսաբեթ Բ թագուհուն, ունեցավ մի շարք այլ կարևոր եկեղեցական ու պաշտոնական հանդիպումներ, եղավ Օքսֆորդում, ուր ուսանել էր տարիներ առաջ, Լորդերի Պալատում դասախոսեց «Ապգ, որ մերժեց մեռնել» թեմայով:

Հավարտ Անգլիկան Եկեղեցուն տված պաշտոնական այցելության, Քենթրբերիի Արքեպիսկոպոսի հետ ստորագրվեց համատեղ հայտարարություն, որում երկու Հովվապետերը, գոհություն հայտնելով երկու Եկեղեցիների միջև եղած և խորացող համագործակցության համար, կարևորեցին նաև քրիստոնեական բոլոր Եկեղեցիների համատեղ գործակցությունը՝ հանուն քրիստոնեական դաստիարակության և քարոզչության առաքելության, ինչպես նաև դիմագրավելու արդի աշխարհում հարուցվող մարտահրավերներին:

Այնուհետև, իր անդրանիկ հովվապետական այցելությունը տալով անգլիահայ համայնքին, Վեհափառ Հայրապետը Լոնդոնի Սուրբ Սարգիս և Սուրբ Պետրոս, Մանչեստրի Սուրբ Երրորդություն հայկական եկեղեցիներում Սուրբ Պատարագ մատուցեց, իր հայրապետական պատգամը և հայրական օրհնությունը բաշխելով հայ հավատացյալներին, նախագահեց իր պատվին կազմակերպված համայնքային ընդունելություններին, եղավ հայկական տարբեր կրթա-մշակութային հաստատություններում և Հայաստանի Հանրապետության դեսպանատանը:

Անգլիա կատարած պաշտոնական այցելության ընթացքում Վեհափառ Հայրապետը էկումենիկ ոգով հանդիպումներ և տեսակցություններ ունեցավ Անգլիայում գործող քույր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ:

Հայոց Հայրապետը, ավարտելով Անգլիկան Եկեղեցուն և Անգլիայի հայ համայնքին տված այցելությունը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձավ նոյեմբերի 22-ին: